# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

14 մարտի 2016 թվականի թիվ 11(Ա)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի առաջին մասի 28.1) կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 9-ի թիվ 980-Ն որոշումն ու նկատի ունենալով քաղաքապետի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 8 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի օգտագործման սխեման՝ համաձայն հավելվածի:
2. Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՅԱՆ Գ.
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա.
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ս.
4. ԻՎԱՆՅԱՆ Վ.
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա.
6. ԽԱՉԱՏՐՅԱՆ Հ.
7. ՄԻՆԱՍՅԱՆ Տ.
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ Ա.

**Քաղաքապետ՝ Ա.Հակոբջանյան**

2016թ. մարտի 14
ք.Սիսիան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի
քաղաքային համայնքի ավագանու
2016 թ. մարտի 14-ի թիվ 11(Ա) որոշման




Հատկացվող տարածք 20-ական քմ՝ 12 հատ

ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա.ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

14 մարտի 2016 թվականի թիվ 12(Ա)

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի առաջին մասի 20) կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ և 3)-րդ մասով ու 67-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 9-ի թիվ 980-Ն որոշումն ու Սիսիանի քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 81(Ն) որոշումը և նկատի ունենալով քաղաքապետի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 8 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝*

1. 2016 թվականին բաց դասական աճուրդով օտարել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասերը.
    1) Իսրայելյան 1/1-2 հասցեի բնակավայրերի հասարակական կառուցապատման 86քմ հողամասը (վկ.07032014-09-0025, ծածկ.09-006-0212-0090, կադաստրային արժեք 1քմ 342 ՀՀ դրամ) 29412 (քսանինը հազար չորս հարյուր տասներկու) ՀՀ դրամ մեկնարկային գնով, սպասարկման կետ կառուցելու նպատակով,
    2) Իսրայելյան 1/1-4 հասցեի բնակավայրերի հասարակական կառուցապատման 107քմ հողամասը (վկ.07032014-09-0008, ծածկ.09-006-0212-0088, կադաստրային արժեք 1քմ 342 ՀՀ դրամ) 36594 (երեսունվեց հազար հինգ հարյուր իննսունչորս) ՀՀ դրամ մեկնարկային գնով, սպասարկման կետ կառուցելու նպատակով,
    3) Չարենցի 9/1 հասցեի բնակավայրերի հասարակական կառուցապատման 150քմ հողամասը (վկ.04062012-09-0059, ծածկ.09-006-0250-0055, կադաստրային արժեք 1քմ 528 ՀՀ դրամ) 79200 (յոթանասունինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամ մեկնարկային գնով, սպասարկման կետ կառուցելու նպատակով,
    4) Խանջյան 61/3 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման 800քմ հողամասը (վկ. 16072014-09-0017, ծածկ.09-006-0227-0049, կադաստրային արժեք 1քմ 528 ՀՀ դրամ) 422400 (չորս հարյուր քսաներկու հազար չորս հարյուր) ՀՀ դրամ մեկնարկային գնով, բնակելի տուն կառուցելու նպատակով,
    5) Խանջյան 61/4 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման 600քմ հողամասը (վկ. 2793613, ծածկ.09-006-0227-0036, կադաստրային արժեք 1քմ 528 ՀՀ դրամ) 316800 (երեք հարյուր տասնվեց հազար ութ հարյուր) ՀՀ դրամ մեկնարկային գնով, բնակելի տուն կառուցելու նպատակով,

6) Խանջյան 61/5 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման 600քմ հողամասը (վկ. 2793612, ծածկ.09-006-0227-0035, կադաստրային արժեք 1քմ 528 ՀՀ դրամ) 316800 (երեք հարյուր տասնվեց հազար ութ հարյուր) ՀՀ դրամ մեկնարկային գնով, բնակելի տուն կառուցելու նպատակով,
7) Խանջյան 61/10 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման 600քմ հողամասը (վկ. 16072014-09-0035, ծածկ.09-006-0227-0046, կադաստրային արժեք 1քմ 528 ՀՀ դրամ) 316800 (երեք հարյուր տասնվեց հազար ութ հարյուր) ՀՀ դրամ մեկնարկային գնով, բնակելի տուն կառուցելու նպատակով,
8) Խանջյան 61/11 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման 600քմ հողամասը (վկ. 16072014-09-0004, ծածկ.09-006-0227-0044, կադաստրային արժեք 1քմ 528 ՀՀ դրամ) 316800 (երեք հարյուր տասնվեց հազար ութ հարյուր) ՀՀ դրամ մեկնարկային գնով, բնակելի տուն կառուցելու նպատակով,
9) Իսրայելյան 69 հասցեի բնակավայրերի հասարակական կառուցապատման 1000քմ հողամասը (վկ. 22766623, ծածկ.09-006-109-015, կադաստրային արժեք 1քմ 342 ՀՀ դրամ) 342000 (երեք հարյուր քառասուներկու հազար) ՀՀ դրամ մեկնարկային գնով, սպասարկման կետ կառուցելու նպատակով:
10) Գայի 1-1/7 հասցեի բնակավայրերի հասարակական կառուցապատման 210քմ հողամասը (վկ. 11022013-09-0227, ծածկ.09-006-0094-0195, կադաստրային արժեք 1քմ 342 ՀՀ դրամ) 71820 (յոթանասունմեկ հազար ութ հարյուր քսան) ՀՀ դրամ մեկնարկային գնով, սպասարկման կետ կառուցելու նպատակով:
11) Գայի 1-1/9 հասցեի բնակավայրերի հասարակական կառուցապատման 119քմ հողամասը (վկ. 11022013-09-0223, ծածկ.09-006-0094-0194, կադաստրային արժեք 1քմ 342 ՀՀ դրամ) 40698 (քառասուն հազար վեց հարյուր իննսունութ) ՀՀ դրամ մեկնարկային գնով, սպասարկման կետ կառուցելու նպատակով:
12) Գայի 1-1/11 հասցեի բնակավայրերի հասարակական կառուցապատման 96քմ հողամասը (վկ. 11022013-09-0238, ծածկ.09-006-0094-0198, կադաստրային արժեք 1քմ 342 ՀՀ դրամ) 32832 (երեսուներկու հազար ութ հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ մեկնարկային գնով, սպասարկման կետ կառուցելու նպատակով:

2. Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՅԱՆ Գ.
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա.
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ս.
4. ԻՎԱՆՅԱՆ Վ.
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա.
6. ԽԱՉԱՏՐՅԱՆ Հ.
7. ՄԻՆԱՍՅԱՆ Տ.
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ Ս.

**Քաղաքապետ՝ Ա.Հակոբջանյան**

2016թ. մարտի 14
ք.Սիսիան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

14 մարտի 2016 թվականի թիվ 13(Ա)

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի առաջին մասի 20) կետով, համաձայն Սիսիանի քաղաքային համայնքի 2016 թվականի գույքի օտարման ծրագրի և հիմք ընդունելով 2015 թվականի մարտի 9-ի «Հողի և ունեցվածքի գործառնություններ» փակ բաժնետիրական ընկերության թիվ 20/2Ե-127 հաշվետվությունը, նկատի ունենալով, որ 2015 թվականի հոկտեմբերի 20-ին և դեկտեմբերի 28-ին նշանակված Սիսական 28/1 հասցեի անշարժ գույքի աճուրդները չեն կայացել հայտեր չներկայացնելու պատճառով, հաշվի առնելով քաղաքապետի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 8 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝*

1. 2016 թվականին բաց դասական աճուրդով օտարել Սիսիանի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող Սիսական 28/1 հասցեում գտնվող անշարժ գույքը (312քմ հողամասը՝ վկ. 30012015-09-0020, ծածկ. 09-006-0109-0055 և նրա վրա կառուցված 253,95քմ մարզադահլիճը՝ ծածկ. 09-006-9-0055-001-000)՝ 3690000 (երեք միլիոն վեց հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ մեկնարկային գնով:
2. Սահմանել, որ՝
   1) առաջին աճուրդի ժամանակ չվաճառված գույքի վաճառքի նպատակով կազմակերպվում են աճուրդներ, ընդ որում, յուրաքանչյուր հերթական աճուրդի ժամանակ գույքի վաճառքի մեկնարկային գինը նվազեցվում է վերջին աճուրդի մեկնարկային գնի 25 տոկոսի չափով.
   2) գնորդի կողմից փոխհատուցման է ենթակա գույքի արժեքի որոշման հետ կապված վճարը՝ 53333 /հիսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք/ ՀՀ դրամ:
3. Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՅԱՆ Գ.

2. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա.

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ս.

4. ԻՎԱՆՅԱՆ Վ.

5. ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա.

6. ԽԱՉԱՏՐՅԱՆ Հ.

7. ՄԻՆԱՍՅԱՆ Տ.

8. ՎԱՐԴԱՆՅԱՆ Ս.

**Քաղաքապետ՝ Ա.Հակոբջանյան**

2016թ. մարտի 14
ք.Սիսիան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

14 մարտի 2016 թվականի թիվ 14(Ա)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի առաջին մասի 20) կետով և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 9-ի թիվ 980-Ն որոշումն ու նկատի ունենալով քաղաքապետի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 8 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝*

1. 2016 թվականին բաց մրցույթով, կառուցապատման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասերը.
   1) Իսրայելյան 1/1-6 հասցեում գտնվող ընդհանուր օգտագործման 347քմ հողամասը (վկ. 07032014-09-0022, ծածկ. 09-006-0535-0003)՝ կառուցապատման և բարեկարգման նպատակով, 50 տարի ժամկետով, 1քմ հողամասի վարձավճարը տարեկան 200 ՀՀ դրամ մեկնարկային գնով,
   2) Իսրայելյան 2/6 հասցեում գտնվող ընդհանուր օգտագործման 1700քմ հողամասը (վկ. 25102013-09-0023, ծածկ. 09-006-0223-0064) կառուցապատման և բարեկարգման նպատակով, 50 տարի ժամկետով, 1քմ հողամասի վարձավճարը տարեկան 200 ՀՀ դրամ մեկնարկային գնով,
   3) Շահումյան 72/48-1 հասցեում գտնվող բնակավայրերի բնակելի կառուցապատման 191քմ հողամասը (վկ. 17022016-09-0010, ծածկ. 09-006-0092-0066) կառուցապատման նպատակով, 50 տարի ժամկետով, 1քմ հողամասի վարձավճարը տարեկան 150 ՀՀ դրամ մեկնարկային գնով:
2. Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՅԱՆ Գ.

2. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա.

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ս.

4. ԻՎԱՆՅԱՆ Վ.

5. ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա.

6. ԽԱՉԱՏՐՅԱՆ Հ.

7. ՄԻՆԱՍՅԱՆ Տ.

8. ՎԱՐԴԱՆՅԱՆ Ս.

**Քաղաքապետ՝ Ա.Հակոբջանյան**

2016թ. մարտի 14
ք.Սիսիան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

## ՈՐՈՇՈՒՄ

14 մարտի 2016 թվականի թիվ 15(Ա)

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի առաջին մասի 20) կետով և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին և 5-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման կարգի 46.2 կետի ա) ենթակետը և 2007 թվականի օգոստոսի 9-ի թիվ 980-Ն որոշումը, նկատի ունենալով Սիսիանի քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի հունիսի 11-ի թիվ 35(Ա) և նոյեմբերի 30-ի թիվ 82(Ա) որոշումներն ու քաղաքապետի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 8 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝*

1. 2016 թվականին առանց մրցույթի կառուցապատման իրավունքով տրամադրել Սիսիանի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հետևյալ հողամասերը.
   1) Շահումյան փողոց 74/23 հասցեի 20քմ հողամասը (վկ. 17022016-09-0018, ծածկագիր՝ 09-006-0105-0059) ավտոտնակ կառուցելու նպատակով, 25 տարի ժամկետով, 1քմ հողամասի տարեկան վարձավճարը՝ 250 ՀՀ դրամ,
   2) Շահումյան փողոց 74/21 հասցեի 20քմ հողամասը (վկ.17022016-09-0016, ծածկագիր՝ 09-006-0105-0058) ավտոտնակ կառուցելու նպատակով, 25 տարի ժամկետով, 1քմ հողամասի տարեկան վարձավճարը՝ 250 ՀՀ դրամ,
   3) Զ.Անդրանիկի փողոց 3/1-6 հասցեի 20քմ հողամասը (վկ. 17022016-09-0004, ծածկագիր՝ 09-006-0092-0065) ավտոտնակ կառուցելու նպատակով, 25 տարի ժամկետով, 1քմ հողամասի տարեկան վարձավճարը՝ 250 ՀՀ դրամ,
   4) Իսրայել-Օրի փողոց 5/1-8 հասցեի 20քմ հողամասը (վկ. 30092015-09-0011, ծածկագիր՝ 09-006-0249-0136) ավտոտնակ կառուցելու նպատակով, 25 տարի ժամկետով, 1քմ հողամասի տարեկան վարձավճարը՝ 250 ՀՀ դրամ,
   5) Իսրայել-Օրի փողոց 5/1-12 հասցեի 20քմ հողամասը (վկ. 30092015-09-0012, ծածկագիր՝ 09-006-0249-0137) ավտոտնակ կառուցելու նպատակով, 25 տարի ժամկետով, 1քմ հողամասի տարեկան վարձավճարը՝ 250 ՀՀ դրամ:

2. Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՅԱՆ Գ.

2. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա.

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ս.

4. ԻՎԱՆՅԱՆ Վ.

5. ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա.

6. ԽԱՉԱՏՐՅԱՆ Հ.

7. ՄԻՆԱՍՅԱՆ Տ.

8. ՎԱՐԴԱՆՅԱՆ Ս.

**Քաղաքապետ** **Ա.Հակոբջանյան**

2016թ. մարտի 14
ք.Սիսիան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

14 մարտի 2016 թվականի թիվ 16(Ն)

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 81(Ն) ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի 5-րդ կետով և նկատի ունենալով քաղաքապետի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 8 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող գույքի (հողամասերի, շենքերի և շինությունների) օտարման 2016 թվականի ծրագիրը հաստատելու մասին» թիվ 81(Ն) որոշման մեջ կատարել լրացումներ և որոշման հավելվածը լրացնել 17), 18) և 19) կետերով՝ համաձայն հավելվածի:
2. Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՅԱՆ Գ.
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա.
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ս.
4. ԻՎԱՆՅԱՆ Վ.

5. ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա.

6. ԽԱՉԱՏՐՅԱՆ Հ.

7. ՄԻՆԱՍՅԱՆ Տ.

8. ՎԱՐԴԱՆՅԱՆ Ս.

**Քաղաքապետ՝ Ա.Հակոբջանյան**

2016թ. մարտի 14
ք.Սիսիան

*Հավելված*
*ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի ավագանու 2016թ. մարտի 14-ի թիվ 16(Ն) որոշման*

## ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 81(Ն) որոշման հավելվածում կատարվող լրացումները

| հ/հ | Օտարվող գույքի վկայականի համարը և ծածկագիրը | Օտարվող գույքի հասցեն | Օտարվող գույքի մակերեսը, քմ | Օտարման նպատակը | Օտարման ժամկետները | Գույքի օտարման մեկնարկային գինը ՀՀ դրամով՝ ըստ գոտիների | Հողամասի գործառնական նշանակությունը և կատեգորիան |
|---|---|---|---|---|---|---|---|
| 17 | վկ. 27072015-09-0003<br>ծածկ.09-006-0223-0001 | Իսրայելյան 1/1-3 | 960 | բնակելի տուն կառուցելու նպատակով | II կիսամյակ | 506880 | բնակավայրերի բնակելի կառուցապատման |
| 18 | վկ. 10022016-09-0029<br>ծածկ.09-006-0239-0224 | Խանջյան 3/1-1 | 700 | բնակելի տուն կառուցելու նպատակով | I կիսամյակ | 369600 | բնակավայրերի բնակելի կառուցապատման |
| 19 | վկ. 29022016-09-0009<br>հող. ծածկ.09-006-0109-0077<br>շին.09-006-0109-0077-001 | Իսրայելյան 39/38-10 | 34.2<br>23.67 | ավտոտնակ | I կիսամյակ | 18058<br>26058<br>/հաշվարկ ըստ ՀՀ կառավարության 2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի/ | բնակավայրերի բնակելի կառուցապատման |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | **920596** | |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ          Վ.ՄԻՐԱԲՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

14 մարտի 2016 թվականի թիվ 17(Ա)

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի ԹԻՎ 15(Ա) ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի 5-րդ կետով և 2015 թվականի նոյեմբերի 24-ին ընդունված ««Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 8 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի ապրիլի 11-ի «Համայնքային հիմնարկը համայնքային կառավարչական հիմնարկի անվանափոխելու մասին» թիվ 15(Ա) որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) որոշման 1-ին և 2-րդ կետերում «քաղաքապետարանի աշխատակազմ» բառերը փոխարինել «համայնքապետարանի աշխատակազմ» բառերով,
   2) որոշման հավելվածի կանոնադրության 2-րդ կետում «/այսուհետ՝ քաղաքապետ/» բառերը հանել,
   3) որոշմամբ հաստատված հավելվածի կանոնադրության մեջ «քաղաքապետարան» և «քաղաքապետ» բառերը և դրանց համապատասխան հոլովածները փոխարինել համապատասխանաբար «համայնքապետարան» և «համայնքի ղեկավար» բառերով և դրանց համապատասխան հոլովածներով:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՅԱՆ Գ.

2. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա.

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ս.

4. ԻՎԱՆՅԱՆ Վ.

5. ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա.

6. ԽԱՉԱՏՐՅԱՆ Հ.

7. ՄԻՆԱՍՅԱՆ Տ.

8. ՎԱՐԴԱՆՅԱՆ Ս.

**Քաղաքապետ՝ Ա.Հակոբջանյան**

2016թ. մարտի 14
ք.Սիսիան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

14 մարտի 2016 թվականի թիվ 18(Ա)

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի ԹԻՎ 16(Ա) ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի 5-րդ կետով և 2015 թվականի նոյեմբերի 24-ին ընդունված ««Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 8 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի ապրիլի 11-ի «ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման Սիսիանի տարածքային բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 16(Ա) որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) որոշման վերնագրում ու 1-ին կետում և որոշմամբ հաստատված հավելվածի կանոնադրության մեջ «քաղաքապետարանի աշխատակազմ» բառերը փոխարինել «համայնքապետարանի աշխատակազմ» բառերով:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՅԱՆ Գ.
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա.
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ս.
4. ԻՎԱՆՅԱՆ Վ.
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա.
6. ԽԱՉԱՏՐՅԱՆ Հ.
7. ՄԻՆԱՍՅԱՆ Տ.
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ Ս.

**Քաղաքապետ** **Ա.Հակոբջանյան**

2016թ. մարտի 14
ք.Սիսիան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

14 մարտի 2016 թվականի թիվ 19(Ա)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 58(Ա) ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի 5-րդ կետով և 2015 թվականի նոյեմբերի 24-ին ընդունված ««Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ու ««Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 8 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի հոկտեմբերի 11-ի «ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 58(Ա) որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) որոշման վերնագրում ու թիվ 1 և 2 կետերում և 1-ին ու 2-րդ հավելվածներում «քաղաքապետարանի աշխատակազմի» բառերը փոխարինել «համայնքապետարանի աշխատակազմի» բառերով,
   2) որոշման թիվ 2-րդ կետի 2-րդ հավելվածում «քաղաքապետ» բառը և դրանց համապատասխան հոլովածները փոխարինել «համայնքի ղեկավար» բառերով և դրանց համապատասխան հոլովածներով:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՅԱՆ Գ.

2. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա.

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ս.

4. ԻՎԱՆՅԱՆ Վ.

5. ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա.

6. ԽԱՉԱՏՐՅԱՆ Հ.

7. ՄԻՆԱՍՅԱՆ Տ.

8. ՎԱՐԴԱՆՅԱՆ Ս.

**Քաղաքապետ՝ Ա.Հակոբջանյան**

2016թ. մարտի 14
ք.Սիսիան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

14 մարտի 2016 թվականի թիվ 20(Ա)

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 84(Ա) ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի 5-րդ կետով և նկատի ունենալով քաղաքապետի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 8 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝*

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի մասին» թիվ 84(Ա) որոշման մեջ կատարել փոփոխություն և որոշման 1-ին կետի հավելվածի 4-րդ կետի «Համիկ Արսենյան» բառերը հանել:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՅԱՆ Գ.
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա.
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ս.
4. ԻՎԱՆՅԱՆ Վ.
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա.
6. ԽԱՉԱՏՐՅԱՆ Հ.
7. ՄԻՆԱՍՅԱՆ Տ.
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ Ս.

**Քաղաքապետ** **Ա.Հակոբջանյան**

2016թ. մարտի 14
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

14 մարտի 2016 թվականի թիվ 21(Ա)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի ԹԻՎ 51(Ա) ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի 5-րդ կետով և նկատի ունենալով քաղաքապետի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 8 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝*

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի հուլիսի 14-ի «Սիսիանի քաղաքային համայնքի «Սիսիանի լրատու» ՍՊԸ համայնքային առևտրային կազմակերպության լուծարման մասին» թիվ 51(Ա) որոշման մեջ կատարել փոփոխություն և որոշման 2-րդ կետի 2)-րդ ենթակետի «Արսենյան Համիկ - աշխատակազմի կազմակերպական բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ» բառերը փոխարինել «Սլավիկ Դադաշյան - աշխատակազմի կազմակերպական բաժնի պետ, հանձնաժողովի անդամ» բառերով:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՅԱՆ Գ.
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա.
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ս.
4. ԻՎԱՆՅԱՆ Վ.
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա.
6. ԽԱՉԱՏՐՅԱՆ Հ.
7. ՄԻՆԱՍՅԱՆ Տ.
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ Ս.

**Քաղաքապետ** **Ա.Հակոբջանյան**

2016թ. մարտի 14
ք.Սիսիան